

ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

Եվրոպական դպրոցը համաշխարհային լեզվաբանության դասական դպրոցներից է, որը շնորհիվ ականավոր լեզվաբանների մեծ դեր է խաղացել համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացման մեջ, այդ թվում նաև նախադասության տեսության զարգացման մեջ:

Ինչպես հայտնի է, նախադասությանը վերաբերող հետազոտությունների ոլորտը բավականին ընդգրկում է: Սակայն մեկ հոդվածի շրջանակներում անհնար է ընդգրկել բոլոր լեզվաբանների աշխատանքների վերլուծությունը, հետևաբար, փորձելով պարզել, թե հատկապես որ դրույթների շուրջ են լեզվաբանները համակարծիք և տարակարծիք, կներկայացնենք այն աշխատանքների լուսաբանումը, որոնք դարձել են բազմաթիվ հետազոտությունների անկյունաքար:

Սույն վերլուծության հիմնակետն է նախադասությունը որպես լեզվական միավոր և հատուկ ուշադրություն է դարձվում նաև նախադասության իմաստաբանության հարցին: Դա պայմանավորված է նրանով, որ վերջին տասնամյակներում լեզվաբանական գրականության մեջ հաճախ են անդրադառնում նախադասության իմաստային հայեցակերպին, հետևաբար նախադասության սահմանման վերաբերյալ մոտեցումների հետ մեկտեղ կփորձենք ստորև ներկայացնել նախադասության նշանակություն, իմաստ, բովանդակություն, վերաբերելի հասկացություններից յուրաքանչյուրի առանձնահատկությունը և կապը մյուսների հետ:

Հատկանշական է, որ իմաստը և վերաբերելին, բովանդակությունն ու նշանակությունը եղել են գիտության տարբեր, բայց միմյանց հետ սերտորեն փոխկապակցված ճյուղերի՝ լեզվաբանության, փիլիսոփայության ուշադրության կենտրոնում: Այսպես, իմաստ և վերաբերելի հասկացություններն առաջին անգամ փորձել է տարանջատել գերմանացի հայտնի փիլիսոփա, Վիեննայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչ Գ.Ֆրեգեն: Համաձայն վերջինիս, իմաստը և վերաբերելին նշանակության երկու տարբեր կողմերն են: Ընդ որում, լեզվաբանության մեջ նշանակությունը սահմանվում է որպես հաղորդակցման ընթացքում նշանների կրած բովանդակություն, որի հաղորդումն ու փոխանցումը լեզվի առաջնային նպատակն ու գործառույթն է: Վերաբերելին իրականության այն հատվածն է, որին նախադասությունը վերաբերում է: Իմաստը վերաբերելի արտահայտման ձևն է կամ նրա ճանաչողական նշանակությունը:

cognitive significance): Գ.Ֆրեգեն նշում է, որ իմաստը որոշ դեպքերում կարող է չհամընկնել վերաբերելիի հետ և բերում է իր դասական դարձած օրինակը. «առավոտյան աստղ» և «երեկոյան աստղ» արտահայտություններն ունեն միևնույն վերաբերելի՝ Վեներա մոլորակը, բայց դրանք ունեն տարբեր իմաստներ, այն է՝ Վեներա մոլորակն առավոտյան և երեկոյան:

Մեկ այլ ականափոր մտածող, վերոհիշյալ Վիեննայի դպրոցի ներկայացուցիչ, անգլիացի փիլիսոփա Բ.Ռասելը մերժում է Գ.Ֆրեգեի իմաստ-վերաբերելի տարանջատումը: Գ.Ֆրեգեն նախադասությանը վերագրում է և իմաստ և վերաբերելի, իսկ Բ.Ռասելը, ի տարբերություն Գ.Ֆրեգեի, գտնում է, որ չի կարելի իմաստը դիտել զուտ որպես վերաբերելիի արտահայտման ձև, քանի որ ոչ բոլոր դեպքերում է, որ իմաստ արտահայտող նախադասությունը ունի վերաբերելի (Ողիսևսի օրինակը): Հարկ է նշել, որ Գ.Ֆրեգեի և Բ.Ռասելի տեսությունը ստացել է նշանակության հաստատման տեսություն անվանումը (Verificationist theory of meaning)(14):

Գ.Պաուլը՝ 20-րդ դարի առաջին կեսի ակնառու լեզվաբաններից մեկը, իր մոտեցման մեջ դնում է տրամաբանական միտվածություն: Համաձայն նրա տեսակետի, նախադասությունը անհատի հոգեկանում արտացոլվող պատկերացումների համադրման արդյունք է, ինչպես նաև դրանց կապակցման խթանման միջոց: Եթե նույնիսկ ի սկզբանե տեղի է ունենում ամբողջական մտքի՝ մասերի բաժանում, հետագայում միևնույնն է՝ դրանք նորից համադրվում են(այս տեսակետը հետագայում քննադատության կենթարկվի Ա.Գարդիների կողմից): Գ.Պաուլն այս սահմանման ընտրությունը մեկնաբանում է նրանով, որ այն թույլ է տալիս ընդգրկել նախադասության տարբեր տեսակներ (3, 143 -145):

20-րդ դարի մեկ այլ հայտնի անգլիացի լեզվաբան Ա.Գարդիները նախադասության վերաբերյալ իր մեկնաբանությունները ներկայացնում է « խոսքի և լեզվի տեսություն» աշխատության մեջ: Այսպես, Ա.Գարդիները նախադասությունը համարում է խոսքի միավոր, որն իրականանում է մարդկանց նպատակաուղղված գործողությամբ: Խոսքի, այդ թվում նաև նախադասության, առաջնային հատկանիշներն են նախ և առաջ դրա որևէ իրավիճակի համարժեք լինելը և բովանդակությունը: Նախադասության բովանդակությունը Ա. Գարդիները ներկայացնում է որպես նախադասության անդամ հանդիսացող լեզվական միավորների՝ բառերի նշանակությունների հանրագումար: Եթե բառերի նշանակությունների հանրագումարը Ա.Գարդիներն անվանում է նախադասության բովանդակություն, ապա Փ.Սթրոուսոնը իր «Նշանակություն, ճշմարտություն և հաղորդակցություն» հոդվածում դա անվանում է նախադասության նշանակություն (12, 91): Ա.Գարդիների հավաստմամբ՝ խոսքի ընթացքում իրավիճակը ծառայում է որպես եզրահանգման աղբյուր, այսինքն տեղի է ունենում նկարագրում, օգտագործվում է նկարագրման մեթոդը: Կարող ենք ասել, որ իրավիճակը հանդես է գալիս որպես նախադասության վերա-

քերելի: Նախադասության՝ որևէ իրավիճակի համարժեքությամբ է պայմանավորված նախադասության իմաստային ավարտվածությունը: Վերջինս նախադասության կարևորագույն հատկանիշներից մեկն է, հատկանիշ, որն ի հայտ է գալիս, ինչպես արդեն նշվեց, իրավիճակային համարժեքության և հաղորդակցական նպատակաուղղվածության առկայության դեպքում և հատուկ չէ ոչ մի այլ լեզվական միավորի: Այս առումով Ա.Գարդիները նշում է, որ հաղորդակցական նպատակ ունեցող նույնիսկ մեկ բառը կարող է հանդես գալ որպես նախադասություն(7, 88-98): Գարդիները, ըստ մեզ, իրավացիորեն Գ.Պաուլի հիմնական թերությունն է համարում այն հանգամանքը, որ վերջինս ուշադրություն է դարձնում միայն նախադասության բովանդակությանը և նշելով նախադասության կառուցման եղանակը համադրումը՝ չի խորանում դրա բուն էության մեջ և չի հստակեցնում նախադասության և այլ լեզվական միավորների տարբերությունը: Այս թերությունը Ա.Գարդիները հիմնավորում է նրանով, որ նախադասության վերաբերյալ Գ.Պաուլի սահմանումը կիրառելի է թե՛ “ a beautiful sunset” արտահայտության, թե՛ “ The sunset is beautiful ” նախադասության դեպքում(7, 241-242):

Վ.Մաթեզիուսը Պրագայի դպրոցի ակնառու ներկայացուցիչներից մեկը, նախադասությանը մոտենում է գործառական տեսանկյունից և այն ներկայացնում որպես հաղորդակցման միջոց, հաղորդակցական գործընթացի կարևորագույն տարր: Այսպես, Վ.Մաթեզիուսը նախադասությունը սահմանում է որպես տարրական հաղորդակցական ասույթ, որի միջոցով խոսողը արձագանքում է իրականությանը պայմանական և սուբյեկտիվորեն ավարտուն կերպով: Վերը նշված սահմանման վերաբերյալ Վ.Մաթեզիուսը տալիս է հետևյալ մեկնաբանություններն ու պարզաբանումները.

1.Նախադասությունը սահմանվում է որպես տարրական ասույթ, որպեսզի տարբերակվի երկու կամ ավելի նախադասություններ պարունակող ավելի ընդարձակ ասույթից:

2.Խոսողն արձագանքում է իրականությանը որոշակի կերպով, այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր նախադասություն արտացոլում է իրականության որոշակի հատված(սա այն է, ինչ Ա.Գարդիներն անվանում է իրավիճակային համարժեքություն): Նախադասության կազմավորման ընթացքում այս գործոնը առաջնային կարևորություն ունի:

3.Նախադասության՝ իրականության արտացոլումն ունի պայմանական (conventional, customary) բնույթ: Ինչպես գիտենք, յուրաքանչյուր լեզվին բնորոշ է միայն իրեն հատուկ նախադասության լեզվական կաղապարներ: Պայմանական ասելով՝ Վ.Մաթեզիուսն ի նկատի ունի այն, որ տարրական ասույթը դառնում է նախադասություն այն դեպքում, եթե կառուցվում է տվյալ լեզվին հատուկ որևէ կաղապարի համապատասխան: Նմանատիպ տեսակետ հանդիպեցինք նաև Փ.Սթրոուսոնի վերը նշված «Նշանակություն, ճշմարտություն և

հաղորդակցություն» հողվածում, որտեղ նշվում է, որ նախադասության նշանակությունը կախված է տվյալ լեզվի իմաստաբանական, շարահյուսական կանոններից կամ պայմաններից(13, 95):

4.Սուբյեկտիվ ավարտունությունը միանգամայն տարբեր է օբյեկտիվ ավարտունությունից. ընթերցելի լինելու համար պարտադիր չէ, որ նախադասությունը պարունակի բոլոր անդամները, միանգամայն բավական է խոսողի կողմից դրա՝ ավարտուն համարվելը: Այդ ավարտունությունը արտահայտվում է տվյալ նախադասության վայրընթաց հնչերանգով:

4.Սաթեզիումն իր իսկ սահմանումը թերի է համարում այն առումով, որ դրանում չի շեշտադրվում նախադասության կառուցման ընթացքը: Մինևույն ժամանակ նախադասության կառուցման ընթացքին հատկացված չափազանց մեծ շեշտադրումը 4.Սաթեզիումը, միանալով Ա.Գարդիներին, համարում է Գ.Պաուլի սահմանման թույլ կողմը: Ինչպես վերը նշվեց, Գ.Պաուլը նախադասությունը համարում էր պատկերացումների համադրման՝ սինթեզի արդյունք: Վերոհիշյալ մոտեցումն, ըստ 4.Սաթեզիումի, թերի է այնքանով, որ չի կարող կիրառվել միակազմ նախադասությունների դեպքում, իսկ, ի տարբերություն վերջինիս, նախադասության վերաբերյալ գործառական սահմանումը հավասարապես վերաբերում է թե՛ միակազմ, թե՛ երկկազմ նախադասություններին (9, 79-80): Ֆրանսիացի ականավոր լեզվաբան Շ.Բալլին՝ Ֆ.Սոսյուրի աշակերտներից մեկը, նախադասությունը վերլուծում է հիմնականում կառուցվածքային տեսակետից՝ ստվերում թողնելով իմաստային կողմը: Շ.Բալլին նշում է, որ լեզվի միջոցով մտքի յուրաքանչյուր արտահայտում կապված է տրամաբանական, հոգեբանական և լեզվաբանական գործոններին: Նա վերլուծում է տրամաբանական հայեցակերպը՝ նշելով, որ վերջինս չի կարելի լիովին առանձնացնել մյուս երկուսից, քանի որ դրանք սերտորեն փոխկապակցված են: Շ.Բալլին՝ նախադասության տրամաբանական վերլուծության համաձայն, նախադասությունը մտքի հաղորդման պարզագույն ձևն է: Ստածել նշանակում է արձագանքել պատկերացումներին՝ հաստատելով դրանց առկայությունը, ցանկանալով կամ գնահատելով դրանք: Անդրադառնալով խոսքային գործունեության ոլորտում նախադասության կառուցվածքին՝ Շ.Բալլին առանձնացնում է երկու կարևորագույն բաղադրիչ՝ դիկտում և մոդուս: Դիկտումը համահարաբերական է պատկերացմանը: Սոդուսն այն տարրն է, որն արտահայտում է նախադասության եղանակավորումը և որի արտահայտման միջոցն է եղանակավոր բայը: Դիկտումը և մոդուսը փոխկապակցված են և լրացնում են մեկը մյուսին: Եղանակավորումը նա համարում է «նախադասության ոգին»․ անհնար է նախադասության նշանակությունը հաղորդել ասույթին, եթե վերջինիս մեջ բացակայում է եղանակավորման որևէ դրսևորում (1, 43-46):

Ուշադրության է արժանի Զ.Լայոնգի տեսակետը նախադասության վերաբերյալ: Նա ելակետային է համարում լեզվաբանության ամերիկյան դպրո-

ցի ականավոր լեզվաբաններից մեկի՝ Լ.Բլումֆիլդի սահմանումը՝ նախադասությունը դիտելով որպես ինքնուրույն լեզվական ձև, որը քերականական նկարագրման խոշորագույն միավորն է: Այս դրույթի վերաբերյալ հարկ ենք համարում մեջքերել Դ.Քրիսթալի հետևյալ բացատրությունը. «Նախադասությունը ներկայացնելով որպես քերականական վերլուծության խոշորագույն միավոր՝ պետք է հասկանալ ոչ թե այն, որ դրանից մեծ լեզվական միավոր(ասույթ, դիսկուրս, պարբերություն) գոյություն չունի, այլ այն, որ նախադասությունը այն խոշորագույն միավորն է, որում պատճառաբանվում, բացատրվում են տվյալ լեզվին հատուկ քերականական դասերն ու կառույցները»(5, 201): Վերադառնալով Զ.Լայոնգի տեսակետին նշենք, որ վերջինս նախադասությունը դիտում է որպես վերացական քերականական միավոր, որի բաղադրիչների միջև լեզվաբանը հաստատում է բաշխական հարաբերություններ (distributional relations):

Հիմնվելով այն դրույթի վրա, որ նախադասության սահմանումը պետք է արտացոլի իմաստային և քերականական ավարտունություն՝ Փ.Մաթեուսը նախադասությունը սահմանում է որպես գրավոր կամ բանավոր խոսքում միմյանց հետ հարաբերակցված բառերի շարք, որը մեկ միտք պարունակող, քերականորեն ավարտուն միավոր է(10, 26-27): Նմանատիպ տեսակետ գտնում ենք նաև Դ.Քրիստալի մոտ, որը նախադասությունը ներկայացնում է որպես մեկ ավարտուն մտքի արտահայտում: Միննույն ժամանակ նա նշում է, որ այս սահմանումը չափազանց անհստակ է, քանի որ լեզվում կան նախադասություններ, որոնք թվում է թե արտահայտում են մեկ միտք, բայց ավարտուն չեն: Կան նաև այնպիսի նախադասություններ, որոնք ավարտուն են, բայց արտահայտում են ավելի քան մեկ միտք(6, 214): Նախադասության շարահյուսական վերլուծության ժամանակ Փ.Մաթեուսը օգտագործում է կառուցվածք և շարույթ հասկացությունները: Նախադասության մեջ յուրաքանչյուր բառ ունի իր կառուցվածքը, որի միջոցով բառերը կազմում են շարահյուսական միավոր՝ շարույթ: Փ.Մաթեուսի հավաստմամբ՝ յուրաքանչյուր շարահյուսական միավոր կարելի է դիտել երկու տեսանկյունից. առաջինը՝ որպես մի ամբողջություն, երկրորդը՝ իր բաղադրիչների ներքին կապակցվածության մեջ(10, 1-2):

Հիշարժան են 20-րդ դարի ֆրանսիացի լեզվաբան ներկայացուցիչ Լ.Տենիերի դրույթները: Քերականության ոլորտում նրա հետազոտությունները կենտրոնացնում են շարահյուսության խնդիրների վրա: Լ.Տենիերը նպատակ է դնում ուսումնասիրել նախադասության կառուցվածքային հիմքը, որն էլ հանգեցնում է կառուցվածքային շարահյուսության ձևավորմանը: Այսպես, համաձայն Լ.Տենիերի, նախադասությունը կազմակերպված ամբողջություն է, որի բաղադրիչներն են բառերը: Նախադասության մաս կազմող յուրաքանչյուր բառ կորցնում է այն գատվածությունը, որը հատուկ է վերջինիս բառարանում: Յուրաքանչյուր բառ որոշակի ստորակարգային հարաբերություններ է

ձևավորում նախադասության անդամ մյուս բառերի հետ, որոնց ամբողջությունը կազմում է նախադասության հիմքը, սխեման: Այդ հարաբերությունները ոչնչով չեն արտահայտվում, բայց դրանք պարտադիր կերպով արտացոլվում են խոսողի գիտակցության մեջ, առանց որի ոչ մի նախադասություն հասկանալի չէր լինի: Լ.Տենիերը նշում է, որ նախադասության վերլուծությունը չպետք է կատարվի զուտ մակերեսային կառուցվածքի մակարդակով, քանի որ նման դեպքում անտեսվում է ամենաեականը՝ շարահյուսական կապը: Վերջինս մտքի արտահայտման անհրաժեշտ պայմանն է, առանց որի անհնար է կապակցված մտքի փոխանակումը, քանի որ խոսքը կլինի իրար չհարաբերակցվող բառերի շարան: Ինչպես Փ.Սաթեուսը, Լ.Տենիերը նույնպես գտնում է, որ հենց շարահյուսական կապն է նախադասությունը դարձնում «կենդանի օրգանիզմ»: «Նախադասություն կազմել նշանակում է բառերի միջև հաստատել շարահյուսական կապ, և նախադասությունը հասկանալ նշանակում է բացահայտել այն հարաբերությունները, որոնցով կապակցվում են բառերը », - նշում է Տենիերը (4, 22-23): Տեսականորեն կառուցվածքային և իմաստային կողմերը միանգամայն անկախ են: Վերոհիշյալ դրույթի լավագույն ապացույցն է այն փաստը, որ նախադասությունը շարահյուսորեն կարող է միանգամայն ճիշտ լինել, իսկ իմաստի տեսակետից՝ սխալ: Լ.Տենիերը, ըստ մեզ, իրավացիորեն նշում է, որ կառուցվածքային և իմաստային կողմերի անկախությունը միայն տեսության մեջ է գործում: Իրականում դրանք սերտորեն կապված են, քանի որ հենց կառուցվածքային կողմի միջոցով է իրականացվում մտքի արտահայտումը: Այս երկու կողմերի միջև չկա նույնություն, բայց կա զուգահեռություն, որն արտահայտվում է շարահյուսական կապերի միջոցով: Այլ կերպ ասած, իմաստը արտացոլվում է կառուցվածքի միջոցով (4, 52 - 53): Լ.Տենիերի հետ համակարծիք է Ռ.Ջաքոբսը, ըստ որի նախադասության նշանակությունը հաղորդվում է դրա ձևի միջոցով: Ռ.Ջաքոբսը մեջբերում է հայտնի ասացվածքը. «Կարևոր չէ, թե ինչ է ասվում, այլ կարևոր է, թե ինչպես է ասվում»: Ռ.Ջաքոբսն առանձնացնում է խորքային և մակերեսային նշանակություն հասկացությունները և նշում, որ, եթե խորքային նշանակությունն այն է, թե ինչ է ասվում, ապա մակերեսային նշանակությունն այն է, թե ինչպես է դա ասվում, վերջինս նշանակության այն մասն է, որը հաղորդվում է գրողի կամ խոսողի լեզվական ոճի միջոցով (8, 1-2):

Փ.Ագալը նախադասությունը սահմանում է որպես պարզագույն հաղորդակցական գործողության համակարգված ձև (11, 177): Փ.Ագալը նախադասությունը ընմում է նաև դրա ընկալման լույսի ներքո: Այս կապակցությամբ նա գրում է, որ եթե նախադասությունը դիտվում է որպես հաղորդակցական միավոր, ապա դրա կառուցվածքի նկարագրումը կարտացոլի ոչ միայն խոսողի մտադրությունը և աշխարհի մասին նրա պատկերացումը, այլ նաև խոսակցի պահանջները նույնպես պետք է հաշվի առնվեն որպես նախադասության

կառուցվածքային հատկանիշները պայմանավորող միավոր: Փ.Սգալը կարևորում է լեզվաբանական ձևը՝ կաղապարը, որը նախադասության իմաստային մակարդակի բաղկացուցիչ մասն է, քանի որ առանց այս մակարդակի անհնար է նախադասության բավարար նկարագրումը: Փ.Սգալը նշում է, որ չնայած որոշ իմաստաբանական վերլուծական ուսումնասիրությունների ժամանակ հնարավոր է առանձնացնել գործաբանական հայեցակերպը, այնուամենայնիվ լեզվի, այդ թվում նաև նախադասության, լիակատար ուսումնասիրությունը պետք է կատարվի գործաբանական հայեցակերպի ներքո: Ելնելով այս պնդումից՝ Փ.Սգալը շեշտում է այն հանգամանքը, որ նախադասության նշանակությունն իր մեջ ներառում է թե գործաբանական, թե՛ իմաստաբանական կողմերը(11, 11): Որպես իմաստի տեսության մյուս կարևոր հարց Փ.Սգալը ներկայացնում է նշանակության և վերաբերելիի հարաբերությունները: Այստեղ նշանակությունը պետք է դիտվի որպես լեզվի համակարգին պատկանող միավոր, իսկ վերաբերելին խոսքի համակարգին պատկանող միավոր: Նախադասության նշանակության և վերաբերելիի ամբողջությունը կազմում է նախադասության իմաստը: Միևնույն նախադասությանը կարող է համապատասխանել մի քանի իմաստ, այսինքն միևնույն նախադասությունը տարբեր իրավիճակներում կարող է հանդես գալ որպես տարբեր ասույթներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ իմաստ: Որպես նշանակության և իմաստի տարբերություն Փ.Սգալը նշում է, որ նշանակության ոչ հստակությունը կարող է չեզոքացվել ասույթի իմաստի միջոցով (11, 16): Ըստ Փ.Սգալի, նախադասության նշանակությունը (որն անվանվում է նաև տրամաբանական ձև) պետք է տարբերել բովանդակությունից: Այս տարանջատումը գալիս է դեռ Սոսյուրից, որն առանձնացնում էր «բովանդակության ձև» և «բովանդակության սուբստանս» հասկացությունները (11, 12): Լեզվի համակարգում նշանակությունը պետք է դիտվի որպես բովանդակության կաղապարում: Այսպիսով, նշանակությունը համարժեք է նախադասության կառուցվածքային մակարդակներից մեկին՝ խորքային կառույցի մակարդակին, որը երբեմն կոչվում է նաև նշանակության մակարդակ (11, 296):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզվական միավորներից միայն նախադասությունը կարող է հանդես գալ ինքնուրույն, և որ նշանակությունը ծագում է, սերում է այդ ինքնուրույն կիրառումից խոսքում, կարելի է գալ այն եզրակացության, որ միայն նախադասությունն ունի նշանակություն, որն էլ սերտորեն կապված է կիրառման հետ, այլ կերպ ասած՝ նախադասության նշանակությունն արտահայտել նշանակում է տալ դրա կիրառման օրենքները(14): Հարկ ենք համարում նշել Լ.Սթենթոնի մոտեցումը, որը շարահյուսական տեսակետից նախադասությունը ներկայացնում է որպես արտահայտություն՝ օժտված որոշակի կառուցվածքով և ձևով, իմաստաբանական տեսակետից որպես արտահայտություն՝ օժտված որոշակի

բովանդակությամբ ու նշանակությամբ և գործաբանական տեսակետից որպես արտահայտություն, որին հատուկ է որոշակի կիրառում (12, 441-444):

Սույն հոդվածի շրջանակներում կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նախադասության վերաբերյալ լեզվաբանների կարծիքներն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Առավելագույն զուգաձևություն դիտվում է նախադասության առաջնային հատկանիշների հարցում, այն է իմաստային և քերականական ավարտունությունը, որոնք կարևորվում են Դ.Քրիսթալի, Ա.Գարդիների, Փ.Սաթեուսի կողմից: Եվրոպական դպրոցի արժանիքներից կարելի է համարել այն փաստը, որ, չսահմանափակվելով միայն նախադասության կառուցվածքային վերլուծությամբ, ուշադրություն է դարձվում նաև նախադասության իմաստային կողմին՝ տարանջատելով իմաստ, նշանակություն, բովանդակություն և վերաբերելի հասկացությունները: Տեսակետների համամանություն նկատվում է վերաբերելի հարցում: Վերջինս դիտվում է որպես իրականության այն հատված, որն իր արտահայտումն է գտնում նախադասության իմաստի միջոցով, սակայն, ինչպես Բ.Դասսելն էր նշում, այս պնդումը միանշանակ չէ, քանի որ ոչ բոլոր դեպքերում է իմաստ արտահայտող նախադասությունը ունենում վերաբերելի: Այլ է բանը նշանակության և իմաստի հարցում, որտեղ հանդիպեցինք տարամետ կարծիքներ:

Լեզվաբանական գրականության մեջ նախադասության իմաստաբանությանը բազմիցս անդրադարձել են, սակայն այս հարցի շուրջ միանշանակ կարծիք չկա, և այն, թերևս, հետագա ուսումնասիրության կարիք ունի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Балли Ш., Общая лингвистика и вопросы французского языка, изд. — во иностранной литературы, М., 1955.
2. Лайонз Дж., Введение в теоретическую лингвистику, изд. " Прогресс", М., 1978.
3. Пауль Г., Принципы истории языка, изд. — во иностранной литературы, М., 1960.
4. Теньер Л., Основы структурного синтаксиса, М., изд. — во " Прогресс", 1988.
5. Crystal D., Linguistics, Penguin Books, England, 1977.
6. Crystal D., The Cambridge Encyclopedia of the English Language, Cambridge University Press, 1995.
7. Gardiner A., The Theory of Speech and Language, the Clarendon Press, Oxford, 1951.
8. Jacobs R., Transformations, Style and Meaning, Xerox College Publishing, Massachusetts/Toronto, 1971.
9. Mathesius V., A Functional Analysis of Present Day English On a General Linguistic Basis, Prague, Academia, 1975.
10. Matthews P., Syntax, Cambridge University Press, 1981.
11. Sgall P., The Meanings of the Sentence in Its Semantic and Pragmatic Aspects, 1986.
12. Stainton R., The Meaning of Sentences; Nous, Sep. 2000, Vol. 34, Issue 3
13. Strawson P., Meaning, Truth and Communication; Linguistics at Large, the 14 linguistic lectures presented by the Institute of Contemporary Arts, edited by N.Minnis, London, 1970.
14. The Internet Source www.wikipedia.org